Հավելված N 6
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի
2018 թվականի հունիսի 29-ի
N 481-Ա հրամանի

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ինովացիոն քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, որն իր իրավասությունների սահմաններում ապահովում է Նախարարությանը օրենքով և այլ իրավական ակտերով վերապահված խնդիրների և գործառույթների իրականացումը:

2. Վարչությունն իր իրավասությունների շրջանակներում պատասխանատվություն է կրում իր վրա դրված խնդիրների ու գործառույթների ժամանակին և պատշաճ իրականացման համար:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը (այսուհետ՝ նախարար)՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

## II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Հայաստանի Հանրապետությունում գիտելիքահենք և ինովացիոն տնտեսության ձևավորման ու զարգացման, բարձր տեխնոլոգիական և ինովացիոն զարգացման քաղաքականության ոլորտում Վարչության խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության ազգային ինովացիոն համակարգի ձևավորմանը և զարգացմանը նպաստելը.

2) Գիտելիքահենք և ինովացիոն տնտեսության ձևավորման ու զարգացման քաղաքականության ու նպատակային ծրագրերի մշակման և դրանց իրականացման դիտանցման ապահովումը.

3) Ինովացիոն և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կարգավորող և զարգացումը խրախուսող օրենսդրական դաշտի ստեղծումը.

4) Ինովացիոն գործունեությանը, ինովացիոն արդյունքի առևտրայնացմանն ու տնտեսության մեջ նոր տեխնոլոգիաների ներդրմանն աջակցելը.

5) Ինովացիոն և բարձր տեխնոլոգիական ենթակառուցվածքների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված ծրագրերի մշակումը և դրանց իրականացման համակարգումը.

6) Ինովացիոն և բարձր տեխնոլոգիական կարողությունների զարգացմանը, ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանն ուղղված ծրագրերի իրականացմանն աջակցելը.

7) Ինովացիոն գործունեություն իրականացնող, բարձր տեխնոլոգիական վերազգային ընկերությունների՝ Հայաստան ներգրավման, հայկական ընկերությունների գլոբալացման խթանման, նորաստեղծ ընկերությունների զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացման ապահովումը.

8) Շահագրգիռ մարմինների հետ համատեղ տնտեսություն-գիտություն-կրթություն կապերի ընդլայնմանն ուղղված քաղաքականության մշակման և դրա իրականացման դիտանցման ապահովումը. տնտեսություն-գիտություն-կրթություն կապերի խորացմանն օժանդակելը.

9) Ինովացիոն և բարձր տեխնոլոգիաների ոլորտում պետություն-մասնավոր հատվածների միջև կառուցողական համագործակցության ձևավորմանը նպաստելը.

10) Ինովացիոն և բարձր տեխնոլոգիական զարգացման ոլորտում միջազգային համագործակցության ակտիվացմանն աջակցելը և ոլորտի ծրագրերի իրականացման համակարգումը:

## III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչությունը նշված խնդիրների կատարման համար իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Մշակում է գիտելիքահենք և ինովացիոն տնտեսության ձևավորման ու զարգացման, բարձր տեխնոլոգիաների և ինովացիոն ոլորտի զարգացման քաղաքականությունն ու նպատակային ծրագրերը և իրականացնում է դրանց դիտանցումը.

2) Աջակցում է ինովացիոն գործունեությանը, ինովացիոն արդյունքի առևտրայնացմանը, ինովացիոն նախագծերի և ծրագրերի իրականացմանն ու տնտեսության մեջ առաջադեմ տեխնոլոգիաների ներդրմանը.

3) Մշակում է ինովացիոն և բարձր տեխնոլոգիական ենթակառուցվածքների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերը և համակարգում է դրանց իրականացումը.

4) Օժանդակում է ինովացիոն և բարձր տեխնոլոգիական կարողությունների զարգացմանն ու ոլորտի որակյալ կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանն ուղղված ծրագրերի իրականացմանը.

5) Աջակցում է ինովացիոն գործունեություն իրականացնող, բարձր տեխնոլոգիական վերազգային ընկերությունների՝ Հայաստան ներգրավմանը, ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, հայկական ընկերությունների գլոբալացման խթանմանը, ոլորտի նորաստեղծ ընկերությունների զարգացմանը.

6) Շահագրգիռ մարմինների հետ համատեղ մասնակցում է տնտեսություն-գիտություն-կրթություն կապերի ընդլայնման, գիտատեխնիկական ոլորտի բարեփոխումների քաղաքականության մշակմանը, դրանց իրականացման դիտանցմանը, աջակցում է տնտեսություն-գիտություն-կրթություն կապերի խորացմանը.

7) Ապահովում է ինովացիոն և բարձր տեխնոլոգիական զարգացման ոլորտում միջազգային համագործակցության ակտիվացմանն ուղղված աշխատանքները, Եվրամիության, Եվրասիական տնտեսական միության և ԱՊՀ շրջանակներում ոլորտային համագործակցության ծրագրերի իրականացման համակարգումը.

8) Մասնակցում է մտավոր սեփականության ոլորտի պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը.

9) Իրականացնում է ինովացիոն և բարձր տեխնոլոգիական զարգացման քաղաքականության մշակման գործընթացում պետության և մասնավոր հատվածների, դոնոր կազմակերպությունների, ասոցիացիաների միջև երկխոսության կայացման խթանմանն ուղղված աշխատանքները.

10) Իրականացնում է նախարարության ենթակայությամբ գործող գիտատեխնիկական և ինովացիոն գործունեության պետական կազմակերպությունների ծրագրերի իրագործման դիտանցումը.

11) Ապահովում է Վարչության օպերատիվ աշխատանքների կազմակերպումը ու ոլորտի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը.

12) Վարչությունը կարող է իրականացնել իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:

## IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Վարչության կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատում է նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

7. Վարչությունը՝

1) իր իրավասությունների շրջանակներում կազմակերպում և իրականացնում է աշխատանքներ՝ համագործակցելով Նախարարության այլ ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ.

2) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների համագործակցությամբ, նախապատրաստում է Վարչության գործունեության ոլորտներին վերաբերող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծեր.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրին համապատասխան, ներկայացնում է հաստատման Վարչության ծրագրերը, ինչպես նաև ապահովում է դրանց կատարումը.

8. Վարչության աշխատանքների ղեկավարումը իրականացվում է Վարչության պետի կողմից:

9. Վարչության պետը՝

1) իրականացնում է Վարչության աշխատանքների կազմակերպումը և ընդհանուր ղեկավարումը.

2) պատասխանատու է Վարչությունում համապատասխան աշխատանքային մթնոլորտի և կարգապահության ապահովման, Վարչությունում աշխատակիցների միջև աշխատանքների հավասարաչափ բաշխման և դրանց կատարման համար.

3) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրած գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում է այդ աշխատանքների կատարումը.

4) անմիջական հաշվետու է նախարարին:

---